

գորոյ լսէր պատրաստութիւն գալստեան յայսկոյս, խոստանալով զօրս յօգնականութիւն նմին՝ ըստ իւրում ձեռին բաւականի, եւ խնդրելով ընդունել ՚ի նմանէ զարքայականն պատիւ. որպէս զի եւ ՚ի սպառ անկասկած լիցի այնուհետեւ երկիր իւր ՚ի ձեռնաձգութենէ Յունաց, հռոմէականն ինքնակալի ցուցանելով զինքն լիճ գոյ: Հաստատել զկարծիս մեր եւ զգօն ոմն ժամանակակից յիշատակագիր, ասելով վասն կաթողիկոսին մերոյ, որ յամենայնի համամիտ էր Լեւոնի, եթէ «Վշտացեալ ՚ի հոգի իւր՝ միշտ աղօթից եւ արտասուաց պարապեալ, խնդրէր փրկութիւն Սրբոյ քաղաքին եւ ժողովրդեանն Աստուծոյ. *գրէր եւ ցուցանէր* զամենայն՝ թագաւորացն Յունաց եւ Հռովմայեցոց, զի եթէ իցեն ինչ ձեռնհաս՝ եկեացեն յօգնականութիւն քրիստոնէից»: Յայսոսիկ վստահացեալ եւ կայսերն Ալամանաց, գրէր ՚ի թղթին՝ յառաջ քան զչուն իւր, առ Սալահէտտին, (եթէ վաւերական իցէ թուրքն), թուելով զազգս եւ զիշխանս նիզակակիցս եւ հպատակս իւր, եւ զայս ինչ. «Հի՛մ կեղծաւորիս չգիտել, եթէ *Հայք* եւ այլ անթիւ աշխարհք՝ մերոյ իշխանութեանս են վիճակեալ մասն»²⁰: Ընդ աղօտ իմն՝ մարթ է ճգնել յայս միտս եւ զբան մերոյ պատմչիս Վարդանայ, որպէս թէ գրեալ իցէ կայսեր յԻկոնիոնէ առ կաթողիկոսն Գրիգոր, թէ «Ահա ունիմ թագ եւ զգեստ, զի օձցես թագաւոր Հայոց գով ընտրես»:

Յետ գրութեան թղթոյ Քահանայապետին՝ յուղի անկաւ Փրետրիկ կայսր, քսան եւ աւելի եւս բիրտովք զօրաց, բազում մեծամեծ իշխանօք եւ եպիսկոպոսօք, հանդերձ համանուն որդւով իւրով. եւ ամսօրեայ չուարորութեամբ անցեալ ընդ աշխարհն Ունգարաց, եմուտ յերկիր արեւելեան կայսեր, որ էր յայնմ ժամանակի Իսահակ Անգելոս, գաղտնի դաշնակից Սալահէտտինի, եւ կեղծաւոր բարեկամ Փրետրիկեայ. առ որ բազում ինչ խոստացեալ՝ փութացուցանէր անցանել յԱսիա. իսկ նորա ՚ի վերայ հասեալ խորամանկութեան Բիւզանդացոյն, ձմերեաց ՚ի Թրակիա. եւ առեալ ՚ի նմանէ պատանդս բազումս, յետ տօնի Զատիկին (1190) էանց ընդ Ելլեսպոնտոս եւ ընդ նահանգս Յունաց, որք սկսան նեղել զեկսն. եւ անտուստ մխեցաւ ՚ի վիճակ սուլտանին՝ Խլիճ-արսլանայ, ուր առաւել եւս եւ յայտնապէս եզիտ ընդդիմութիւն. վասն որոյ եւ բռնութեամբ զբռնութիւն վանեալ, եւ նախ զբանակ որդւոյ սուլտանին խորտակեալ, ապա զաթոռա-

²⁰ «...Numquid etiam scire dissimulas Armenian et innumerabiles alias terras nostræ ditioni subjectas?»